

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2012 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Երեւան 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	1
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ	4
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ	6
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ	6
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	8
ԵՎՐՈՊԱ	9
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	9
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ	10
ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ	11
ՎՐԱՍՏԱՆ	11
ԻՐԱՆ	11
ԹՈՒՐԲԻԱ	12
ԱՊՀ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ	12
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	13
ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՖՐԻԿԱ	15
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ	16
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ	18
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	19
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	19
ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	20
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ	21
ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	22
ՍԵՎԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	22
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23

ՀԱՊԿ.....	23
ՆԱՏՕ.....	23
ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	24
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.....	24
ԳԼՈՔԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ	24
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	25
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	25
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ	26
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	26
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ	27

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը, հիմնվելով ՀՀ Նախագահի ուրվագծած արտաքին քաղաքականության եւ նրա կողմից տրված հանձնարարականների հիման վրա, 2012 թվականի ընթացքում շարունակել է աշխատանքներն՝ ուղղված երկրի արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, երկրի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, միջազգային ասպարեզում մեր հեղինակության եւ դիրքերի ամրապնդմանը, տարբեր մայրցամաքներում Հայաստանի բարեկամների թվի ավելացմանը, միջազգային կազմակերպություններում եւ գործընթացներում ներգրավվածության խորացմանը, արտերկրում հանրապետության եւ նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, բարեկամ եւ գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը, արտերկրում հայկական մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային հարաբերություններում դրական օրակարգ ձեւավորող եւ մեր շահերին համահունչ նախաձեռնությունների իրականացմանը:

2012թ. վերահաստատեց, որ արցախյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Հայաստանի ռազմավարությունը ոչ միայն ըմբռնելի է, այլեւ աջակցություն է վայելում միջազգային հանրության կողմից: Դրա մասին էին վկայում 2012թ. հունվարի 23-ին Սոչիում Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների համատեղ հայտարարությունը, 2012թ. հունիսի 19-ի Լոս-Կաբոսում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների նախագահների հայտարարությունը եւ 2012թ. դեկտեմբերի 6-ին Դուբլինում ԵԱՀԿ ԱԳ նախարարների խորհրդին ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրների պատվիրակությունների ղեկավարների հայտարարությունը:

Ադրբեջանի կողմից հրադադարի պարբերական խախտումները, սադրիչ գործողությունները Արցախի հետ շփման գծում եւ Հայաստանի հետ սահմանին լրջորեն վնասեցին ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ բանակցային գործընթացին, այլեւ վտանգեցին տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը:

Բաքվի ապակառուցողական քայլերը համապատասխան բացասական արձագանք ստացան միջազգային հանրության կողմից, ինչպիսին էր Սաֆարովի գործարքը, որը միանշանակ դատապարտվեց ամբողջ աշխարհի կողմից:

Ի կատարումն Յեղասպանության 100-ամյակին ընդառաջ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ ՀՀ Նախագահի հանձնարարականների՝ ԱԳՆ եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից հետետողական աշխատանքներ են տարվել այդ ուղղությամբ:

Հայաստանը շարունակել է ամրապնդել եւ զարգացնել իր ռազմավարական դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ: Տարին ակտիվ էր երկու երկրների բարձրագույն ղեկավարության հանդիպումների, միջխորհրդարանական կապերի, ռազմական, տնտեսական, հումանիտար եւ ապակենտրոնացված փոխգործակցության առումով:

Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ Հայաստանի բարեկամական գործընկերությունը էական զարգացում է ապրել 2012 թվականին, ինչը վերահաստատվեց բարձր մակարդակի փոխայցելությունների ընթացքում:

Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցելությունը Ֆրանսիա կարևոր հանգրվան հանդիսացավ հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունների շարունակական ամրապնդման գործում:

Կարևոր զարգացում են ապրել եվրոպական երկրների հետ քաղաքական երկխոսությունը, տնտեսական համագործակցությունը եւ մշակութային կապերը:

Հայաստան-Եվրամիություն հարաբերություններում հաշվետու տարվա ընթացքում զգալի առաջընթաց է արձանագրվել: Տարին նշանավորվել է բարձրաստիճան փոխայցելություններով, հաջողությամբ ընթանում են Ասոցացման համաձայնագրի եւ խորը ու համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունները: Ստորագրվել է Հայաստան-ԵՄ մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման համաձայնագիրը:

Հետետողական քայլեր են ձեռնարկվել Հայաստանի անմիջական հարեւաններ Վրաստանի եւ Իրանի հետ բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ:

Տարվա ընթացքում միջազգային հանրությունը տարբեր առիթներով վերահաստատել է հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորման վերաբերյալ Հայաստանի սկզբունքային դիրքորոշմանն իր աջակցությունը:

Շարունակվել է ակտիվ ներգրավվածությունը Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում իրականացվող փոխգործակցությանը, քայլեր են ձեռնարկվել ԱՊՀ անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Կարևոր տեղ է հատկացվել Չինաստանի, Հնդկաստանի եւ Ճապոնիայի հետ հարաբերություններին:

Ընդլայնվել է դիվանագիտական կապերի աշխարհագրությունը՝ հատկապես ակտիվացել են աշխատանքներն ասիական եւ լատինամերիկյան ուղղություններով:

Ուշադրության կենտրոնում են եղել զարգացումներն արաբական աշխարհում: Մեր ջանքերն ուղղված են եղել սիրիահայության անվտանգության ապահովմանը եւ առաջացող խնդիրների լուծմանը: Քայլեր են ձեռնարկվել արաբական երկրների հետ ավանդական բարեկամական հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

2012 թվականին նշվեց Հայաստանի եւ մի շարք պետությունների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակը, որի շրջանակներում կազմակերպվեցին բազմաթիվ միջոցառումներ:

2012 թվականը նշանավորվեց նաև ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցության 20-ամյակի տարեդարձով, այդ առիթով տեղի ունեցան մի շարք հորեյանական հանդիսավոր արարողություններ թե Հայաստանում, թե արտերկրում: Շարունակվել է Հայաստանի ակտիվ մասնակցությունը ՄԱԿ-ի կառույցների գործունեությանը:

Նոր լիցք է ստացել Հայաստանի անվտանգության կարելու բաղադրիչ հանդիսացող Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության շրջանակներում ռազմավարական փոխգործակցությունը: Հայկական կողմն հանդես է եկել կառույցի առավել ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններով:

Հետետողական զարգացում է ապրել փոխգործակցությունը ՆԱՏՕ-ի հետ:

Շարունակվել է ակտիվ ներգրավվածությունը ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի եւ մի շարք այլ միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպությունների աշխատանքներին:

Հայաստանը դարձել է Ֆրանկոֆոնիայի Միջազգային Կազմակերպության լիիրավ անդամ:

Տնտեսական բաղադրիչը կարելու տեղ է զբաղեցրել արտաքին քաղաքական օրակարգում: Շարունակվել են աշխատանքները գործընկեր պետությունների հետ տնտեսական հարաբերությունների զարգացման ուղղությամբ ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցների եւ ֆինանսական հաստատությունների շրջանակներում: ԱԳՆ համակարգմամբ տեղի են ունեցել տասնյակ միջկառավարական հանձնաժողովների նիստեր, գործարար համաժողովներ:

Արտաքին գործերի նախարարությունը իր աջակցությունն է բերել միջխորհրդարանական կապերի զարգացմանը: Կարելու տեղ է հատկացվել ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքներին:

Շարունակվել է միջազգային համագործակցությունը մշակութային, գիտական եւ կրթական ոլորտներում: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները աշխատանքներ են տարել արտերկրում հայ մշակույթը ներկայացնելու ուղղությամբ: Կազմակերպվել են Հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջոցառումներ:

Արտգործնախարարությունը շարունակել է աջակցությունը Սփյուռքի նախարարության աշխատանքներին, Հայաստան – Սփյուռք կապերի ամրապնդմանը:

ԱԳՆ համակարգել է Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը:

2012թ. ընթացքում Հանրապետության Նախագահն իրականացրել է 17 օտարերկրյա այց, Հայաստան է այցելել 3 պետության ղեկավար, ինչպես նաև Եվրոպական խորհրդի նախագահը եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահը: ԱԺ նախագահը կատարել է 5 այց, Հայաստան է ժամանել այլ երկրների խորհրդարանի 3 ղեկավար, վարչապետն իրականացրել է 5 այց, Երեւան է ժամանել 2 երկրի վարչապետ, արտգործնախարարը կատարել է 44 օտարերկրյա այց, Հայաստան է այցելել 27 երկրի արտգործնախարար եւ միջազգային կազմակերպության ղեկավար:

Փոխայցելություններն արդյունավետ են եղել ձեռք բերված պայմանավորվածությունների եւ ստորագրված հարյուր հինգ միջազգային պայմանագրերի եւ այլ փաստաթղթերի առումով:

2012թ. ՀՀ-ն դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 4 պետության հետ:

Հայաստանն արտաքին աշխարհի համար շարունակել է մնալ որպես վստահելի եւ կանխատեսելի գործընկեր, բազմաթիվ են եղել Հայաստանի վերաբերյալ դրական հրապարակումները հեղինակավոր միջազգային լրատվամիջոցներում:

Հանրապետության Նախագահը, վարչապետն ու ԱԳ նախարարը շուրջ յոթ տասնյակ ելույթներ, հարցազրույցներ եւ մամուլի ասուլիսներ են ունեցել աշխարհի հեղինակավոր քաղաքագիտական կենտրոններում եւ առաջատար լրատվամիջոցների հետ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

2012թ. ընթացքում տեղի ունեցած զարգացումները վերահաստատեցին, որ արցախյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Հայաստանի կողմից որդեգրած ռազմավարությունը, ոչ միայն ըմբռնելի է, այլ նաեւ աջակցություն է վայելում միջազգային հանրության կողմից: Դրա մասին են վկայում այս տարի Սոչիում, Լոս-Կաբոսում եւ Դուբլինում ընդունված հայտարարությունները, որոնք վերահաստատեցին միջազգային հանրության արդեն հինգ տարի շարունակ ԵԱՀԿ շրջանակներում արտացոլվող մոտեցումները, որոնց համահունչ է Հայաստանի դիրքորոշումը:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են Հայաստանի ջանքերը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի հետ միասին՝ ուղղված արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեն, Իգոր Պոպովը, Ժակ Ֆորը ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրիկը, շարունակելով միջնորդական ջանքերը, բազմաթիվ այցեր են կատարել տարածաշրջան՝ Երեւան, Ստեփանակերտ եւ Բաքու:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ տարվա ընթացքում մի քանի փուլ բանակցություններ են տեղի ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամադյարովի միջեւ:

Հունվարի 23-ին Սոչիում Ռուսաստանի նախագահի նախաձեռնությամբ եւ ներկայությամբ կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպմանն ընդունվեց հայտարարություն, որով պատրաստակամություն հայտնվեց արագացնել Հիմնարար սկզբունքների շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերումը՝ հաշվի առնելով մինչ այդ իրականացված աշխատանքը, շարունակել շփման զծի երկայնքով միջադեպերի հետաքննության անցկացման մեխանիզմի ստեղծման ուղղությամբ բանակցությունները, վստահության ամրապնդման նպատակով քայլերի ձեռնարկումը:

2012թ. հունիսի 19-ին Լոս-Կաբոսում կայացած «Մեծ Քսանյակի» գագաթաժողովում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներ Վլադիմիր Պուտինի, Բարաք Օբամայի եւ Ֆրանսուա Հոլանդի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ համատեղ հայտարարության մեջ հատուկ ընդգծվեց միայն խաղաղ ճանապարհով խնդրի կարգավորման անհրաժեշտությունը, աջակցություն հայտնվեց Սոչիում հունվարի 23-ին ընդունված հայտարարության դրույթների իրականացմանը, վերահաստատվեցին հիմնախնդրի կարգավորման հիմքը կազմող միջազգային իրավունքի սկզբունքները՝ ուժի եւ ուժի սպառնալիքի չկիրառում, ժողովուրդների իրավահավասարություն եւ ինքնորոշում, տարածքային ամբողջականություն, ինչպես նաեւ կոչ արվեց արագացնել Հիմնարար սկզբունքների հիման վրա համաձայնության կայացումը, զերծ մնալ թշնամանքը խորացնող հայտարարություններից եւ քայլերից:

Դեկտեմբերի 6-7-ը Դուբլինում կայացած ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում ընդունված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները հանդես եկան հայտարարությամբ, որում հիմնվելով Սոչիի եւ Լոս-Կաբոսի հայտարարությունների վրա, ընդգծվեց խաղաղ ճանապարհով ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման, 1994թ. հրադադարի մասին պայմանավորվածությունը լիակատար հարգելու անհրաժեշտությունը, կոչ արվեց զերծ մնալ թշնամանքը խորացնող հայտարարություններից եւ քայլերից:

Հայաստանը մի շարք պաշտոնական հայտարարություններով վերահաստատեց իր պատրաստակամությունը, հիմնվելով վերոհիշյալ փաստաթղթերում ամրագրված դրույթների վրա, շարունակել հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը:

Ադրբեջանական կողմը, ոտնահարելով վերոհիշյալ հայտարարությունները եւ ի հակառակ միջազգային հանրության բազմաթիվ կոչերի եւ հորդորների, ողջ տարվա ընթացքում դեմ արտահայտվելով Հիմնարար սկզբունքների համաձայնեցմանը, վստահության ամրապնդման նպատակով քայլերի ձեռնարկմանը, մերժելով 1994թ. հաստատված հրադադարի ամրապնդումը, միջադեպերի քննության մեխանիզմի ստեղծումը, իր թշնամական, ռազմատենչ հայտարարություններով, ապակառուցողական քայլերով, մարդկային բազմաթիվ զոհերի պատճառ դարձած կոպտագույն սադրանքներով թե Արցախի հետ շփման գծում, թե Հայաստանի հետ սահմանին, փաստացի հակադրվեց միջնորդների խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին:

Բանակցային գործընթացին լրջագույն վնաս հասցրեց ադրբեջանա-հունգարական տխրահոջակ գործարքի արդյունքում ադրբեջանցի մարդասպան Սաֆարովի ազատ արձակումն ու հերոսացումը: Այդ սադրիչ քայլին միջազգային հանրության միահամուռ բացասական արձագանքը եւ դատապարտումը վկայեցին Ադրբեջանի ղեկավարության որդեգրած ուղեգծի սնանկության ու անհեռանկարայնության մասին:

Վերոհիշյալ գործողություններով Ադրբեջանը հարված հասցրեց տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը:

2012թ. նշանավորվեց նաեւ ԱՄՆ Ռոդ Այլընդ եւ Մասաչուսեթս նահանգների, ինչպես նաեւ Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի խորհրդարանների կողմից Արցախի Հանրապետության անկախության ճանաչման վերաբերյալ որոշումներով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ

Ի կատարումն Ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի ստեղծման մասին ՀՀ Նախագահի հրամանագրի՝ աշխատանքներ են նախաձեռնվել ԱԳՆ եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից:

Հայոց Ցեղասպանության 97-րդ տարելիցի կապակցությամբ բազմաթիվ երկրներում անց են կացվել ոգեկոչման եւ հիշատակի հարյուրավոր միջոցառումներ, կազմակերպվել են կոնֆերանսներ եւ ցուցահանդեսներ, որոնց աջակցություն են ցուցաբերել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները:

2012թ. հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայոց Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը: Չնայած օրենքի ուժի մեջ մտնելուն խոչընդոտ հանդիսացավ Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումը՝ Ֆրանսիայի նորընտիր նախագահ Ֆրանսուա Հոլանդը տարբեր առիթներով բազմիցս վերահաստատեց նպատակադրվածությունը հասնելու Ֆրանսիայում Հայոց Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի ընդունմանը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Տարին հոբելյանական էր Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակի, ինչպես նաեւ Բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրված պայմանագրի 15-ամյակի առիթով:

ՌԴ հետ դաշնակցային փոխգործակցության եւ ռազմավարական գործընկերության զարգացումը 2012թ. շարունակում էր մնալ ՀՀ արտաքին քաղաքականության կարեւորագույն առաջնայնություններից: Երկուստեք քայլեր են ձեռնարկվել հարաբերությունների առավել խորացման, նոր հեռանկարային ծրագրերի մշակման ու իրականացման ուղղությամբ:

Հազեցած էր կանոնավոր, վստահելի քաղաքական երկխոսությունը: Երկկողմ եւ բազմակողմ ձեռաչափերում ՀՀ եւ ՌԴ բարձրագույն ղեկավարության միջեւ կայացել է շուրջ մեկ տասնյակ հանդիպում:

Հունվարի 23-ին Սոչիում կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՌԴ Նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հանդիպումը:

Օգոստոսի 8-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը այցելություն կատարեց Մոսկվա եւ հանդիպում ունեցավ ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարները հանդիպել են նաեւ դեկտեմբերի 9-ին Աշխաբադում եւ դեկտեմբերի 19-ին՝ Մոսկվայում:

2012թ. մայիսի 15-ին Մոսկվայում եւ հուլիսի 28-ին Լոնդոնում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպումներ է ունեցել ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի հետ:

Զարգացում է ապրել միջխորհրդարանական համագործակցությունը: Հուլիսին պաշտոնական այցերով Հայաստան են ժամանել ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն եւ Պետական Դումայի նախագահ Սերգեյ Նարիշկինը: Նոյեմբերին Սանկտ Պետերբուրգում ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը հանդիպումներ է ունեցել ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի եւ Պետական Դումայի նախագահ Սերգեյ Նարիշկինի հետ:

2012թ. մայիսի 30-ին Աշխաբադում եւ սեպտեմբերի 28-ին Յալթայում կայացել են ՀՀ եւ ՌԴ վարչապետներ Տիգրան Սարգսյանի եւ Դմիտրի Մեդվեդեւի հանդիպումները:

Ապրիլի 2-3-ը պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, ում ընդունեցին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, ԱԺ նախագահ Սամվել Նիկոյանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը, տեղի ունեցան բանակցություններ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Տարվա ընթացքում երկկողմ եւ բազմակողմ ձեռնարկներում Հայաստանի եւ Ռուսաստանի արտագործնախարարներ Էդվարդ Նալբանդյանն ու Սերգեյ Լավրովը ունեցել են մեկ տասնյակից ավելի հանդիպում:

Հոկտեմբերի 15-17-ը տեղի է ունեցել ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի այցը Ռուսաստանյան Դաշնություն:

Սեպտեմբերի 18-19-ը Հայաստան է այցելել ՌԴ պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովը:

Հոկտեմբերի 11-12-ը Երեւանում անցկացվել է հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 14-րդ նիստը: Ստորագրվել է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ մինչեւ 2020 թվականը երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագիրը:

Հոկտեմբերի 12-13-ը Երեւանում կայացել է «Հայաստան եւ Ռուսաստան. միջտարածաշրջանային երկխոսություն 2012» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության երկրորդ համաժողովը, որի շրջանակներում ստորագրվել են մի շարք երկկողմ փաստաթղթեր:

Հաշվետու տարում բազմաթիվ փոխայցելություններ են տեղի ունեցել տարբեր գերատեսչությունների ղեկավարների եւ ապակենտրոնացված մակարդակներով:

Տարվա ընթացքում զարգացել է տնտեսական համագործակցությունը, աճել են ապրանքաշրջանառության ծավալները, առավել ամրապնդվել է ռազմատեխնիկական փոխգործակցությունը, ընդլայնվել են հումանիտար կապերը:

Պարբերական բնույթ են կրել քաղաքական խորհրդատվությունները երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Շարունակել է զարգանալ հայ-ամերիկյան բարեկամական գործընկերությունը: Կանոնավոր հիմքերի վրա է դրվել բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը:

2012թ. դեկտեմբերի 8-14-ը ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն այցելել է Միացյալ Նահանգներ, որտեղ հանդիպում է ունեցել ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենի հետ: Վարչապետ Տիգրան Սարգսյանը մասնակցել է Սիլիկոնյան հովտում Հայաստանի ներկայացուցչության բացմանը, «ԱրմԹեք-2012» համաժողովին և պայմանավորվածություններ են ձեռք բերել ՏՏ ոլորտի ամերիկյան ընկերությունների հետ:

2012թ. հունիսի 4-ին Հայաստան է այցելել ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Բլինթոնը, որին ընդունել է Նախագահ Սերժ Սարգսյանը:

Տարվա ընթացքում միջազգային համաժողովների շրջանակներում տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարարի մի շարք հանդիպումներ ԱՄՆ պետքարտուղարի և նրա տեղակալների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստան են այցելել նաև ԱՄՆ Սենատի և Ներկայացուցիչների պալատի պատվիրակությունները:

Մայիսի 22-ին նախարար Նալբանդյանը Բոստոնում մասնակցել է քաղաքի կենտրոնում գտնվող՝ Հայկական ժառանգության այգու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի պաշտոնական բացման արարողությանը:

Մարտի 19-26-ը Միացյալ Նահանգներ է այցելել պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

2012թ. սեպտեմբերի 24-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ ելույթով հանդես է եկել Լոս-Անջելեսի հեղինակավոր «Համաշխարհային հիմնախնդիրների խորհուրդ» քաղաքագիտական կենտրոնում:

2012թ. հոկտեմբերի 18-ին Երեւանում տեղի է ունեցել հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի (USATF) նիստը, որի արդյունքում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև Էներգետիկայի ոլորտում համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր:

ԵՎՐՈՊԱ

2012թ. Եվրոպական ուղղությունը շարունակել է մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնայնությունների շարքում: Հետետողական եւ ակտիվ քաղաքականություն է իրականացվել՝ նպատակ ունենալով սերտացնել համագործակցությունն ու հարաբերությունները Եվրոպական երկրների ու կառույցների հետ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստան-Եվրամիություն հարաբերությունները 2012թ. նշանավորվել են ինտենսիվ քաղաքական երկխոսությամբ եւ բարձրաստիճան փոխայցելություններով:

Մարտին տեղի է ունեցել ՀՀ Նախագահի այցը Բրյուսել, որտեղ երկրի ղեկավարը հանդիպել է Եվրոպական խորհրդարանի, Եվրոպական խորհրդի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահների, ինչպես նաեւ ընդլայնման եւ ԵՀՔ հարցերով ԵՄ հանձնակատարի հետ:

Հունիսին ՀՀ Նախագահը Բրյուսելում հանդիպում է ունեցել ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցչի հետ:

Հայաստան է այցելել Եվրոպական խորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպոյը, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոն, Ընդլայնման եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն:

ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մարտ ամսին մասնակցել է Պրահայում կայացած Վիշեգրադյան քառյակի ընդլայնված նախարարական հանդիպմանը: Հուլիսին նախարար Նալբանդյանը Բրյուսելում մասնակցել է ԵՄ եւ Արեւելյան գործընկերության արտգործնախարարների հանդիպմանը, որի ընթացքում հաստատվել է Արեւելյան գործընկերության «ճանապարհային քարտեզը»:

Դեկտեմբերին տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ համագործակցության խորհրդի 13-րդ նիստը, որին հայկական պատվիրակությունը գլխավորել է ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: Ստորագրվել է Հայաստանի եւ Եվրոպական Միության միջեւ մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման մասին համաձայնագիրը, նաեւ ԵՄ ծրագրերին Հայաստանի մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ շրջանակային համաձայնագրի մասին արձանագրությունը:

Հաջողությամբ ընթացել են Հայաստան-ԵՄ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները:

Առաջընթաց է արձանագրվել հունիսին Բրյուսելում մեկնարկած Խորը եւ համապարփակ ազատ առետրի գոտի հիմնելու շուրջ բանակցություններում:

Հայաստանը շարունակել է ակտիվորեն մասնակցել Արեւելյան գործընկերության բազմակողմ համագործակցության ձեւաչափին:

Շարունակվել է նաև ոլորտային համագործակցությունը ԵՄ հետ, մասնավորապես՝ արդարադատության, միգրացիայի, առևտրի, բնապահպանության, տրանսպորտի, էներգետիկայի, կրթության եւ գիտության, մարդու իրավունքների ոլորտներում:

Ակտիվորեն ընթացել է խորհրդարանական համագործակցությունը՝ Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի կոմիտեի տասներեքերորդ նիստը, փետրվարին Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի պատվիրակությունը այցելել է Հայաստան, Երեւանում կայացել է Եվրոնեստ խորհրդարանական վեհաժողովի Սոցիալական, կրթության, մշակույթի եւ քաղաքացիական հասարակության հարցերով ենթակոմիտեի նիստը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Հաշվետու տարում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցելություն է կատարել Ֆրանսիա, հանդիպումներ ունեցել Նախագահ Ֆրանսուա Հոլանդի, վարչապետի, Սենատի եւ Ազգային ժողովի ղեկավարների հետ: Այս այցելությունը կարելու է հանգրվան հանդիսացավ հայ-ֆրանսիական բերականական հարաբերությունների շարունակական ամրապնդման գործում:

Հանրապետության Նախագահը այցելություն է կատարել Բելգիայի Թագավորություն, հանդիպումներ ունեցել երկրի բարձրաստիճան ղեկավարների հետ:

ՀՀ Աժ նախագահ Հովիկ Աբրահամյանը պաշտոնական այց է կատարել Չեխիա:

Տեղի են ունեցել նաև բազմաթիվ խորհրդարանական պատվիրակությունների փոխայցելություններ:

Կայացել են ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի աշխատանքային այցերը Բելգիա եւ Գերմանիա:

2012թ. տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական եւ աշխատանքային այցերը մի շարք եվրոպական երկրներ, այդ թվում՝ Ավստրիա, Ֆրանսիա, Լատվիա, Լիտվա, Շվեյցարիա, Բելգիա, Կիպրոս, Իռլանդիա:

Հայաստան են այցելել եվրոպական երկրների եւ կառույցների ղեկավարներ եւ բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Ավստրիայի Նախագահ Հայնց Ֆիշերը, Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովը, Գերմանիայի ԱԳ նախարար Գիդո Վեստերվելլեն, Ֆինլանդիայի ԱԳ նախարար Էրկկի Տուոմիոյան, Կիպրոսի ԱԳ նախարար Էրատո Կոզակու-Մարկուլիսը, Լիտվայի ԱԳ նախարար Աուդրոնիուս Աժուբալիսը, Լյուքսեմբուրգի փոխվարչապետ, ԱԳ նախարար Ժան Ասելբորնը, ՄԹ ԱԳՆ Եվրոպայի հարցերով պետական նախարար Դեյվիդ Լիդինգթոնը, Լատվիայի ԱԳ նախարար Էդգարս Ռինկեվիչսը, Շվեդիայի ԱԳ նախարար Կարլ Բիլդտը, Լեհաստանի ԱԳ նախարար Ռադոսլավ Սիկորսկին եւ Բուլղարիայի ԱԳ նախարար Նիկոլայ Մլադենովը:

Միջազգային համաժողովների եւ բազմակողմ այլ ֆորումների շրջանակներում կայացել են ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները Ավստրիայի,

Մոնտենեգրոյի, Էստոնիայի, Հունգարիայի, Ֆրանսիայի, Իռլանդիայի, Հունաստանի, Սլովենիայի, Իսպանիայի, Լիտվայի, Շվեյցարիայի, Կիպրոսի արտաքին գերատեսչությունների ղեկավարների հետ:

Տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի եւ Նորվեգիայի, Շվեդիայի, Լիտվայի, Չեխիայի, Նիդերլանդների, Գերմանիայի, Շվեյցարիայի ԱԳՆ-ների միջև:

Հուլիսին Երեւան է այցելել Լիտվայի ազգային պաշտպանության նախարար Ռասա Յուկնեիչիենը, հոկտեմբերին՝ Իտալիայի Հանրապետության պաշտպանության նախարար Ջամպաոլո դի Պաոլոն:

Երեւանում գումարվել է հայ-կիպրական միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ եւ հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

ՀՀ-ում բացվել է Չեխիայի դիվանագիտական ներկայացուցչությունը:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ

Հաշվետու ժամանակահատվածում հայ-վրացական հարաբերությունները ակտիվ զարգացում են ապրել: 2012թ. ընթացքում երկու պետությունների միջև կայացել են տարբեր մակարդակների բազմաթիվ փոխայցելություններ:

Նոյեմբերի 30-ին Երեւանում կայացել է ՀՀ եւ Վրաստանի Նախագահների հանդիպումը:

ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մարտի 17-ին եւ հուլիսի 10-ին աշխատանքային այցեր է կատարել Վրաստան: Հուլիսի 14-ին Երեւան է այցելել Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն: Երկու երկրների ԱԳ նախարարները մի շարք հանդիպումներ են ունեցել բազմակողմ համաժողովների շրջանակներում:

2012թ. Վրաստան են այցելել Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը, Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը, Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

ԻՐԱՆ

2012թ. ընթացքում Հայաստան-Իրան փոխշահավետ հարաբերությունները բնականոն զարգացում են ապրել: Տեղի են ունեցել պաշտոնատար անձանց մի շարք փոխայցելություններ:

2012թ. ապրիլի 29-ին, պաշտոնական այցով Թեհրան է այցելել ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը: Հանդիպումներ են կայացել ԻԻՀ նախագահ

Մահմուդ Ահմադինեժադի, ԻԻՀ Մեջլիսի խոսնակ Ալի Լարիջանիի, ԻԻՀ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Սաիդ Ջալիլիի եւ ԻԻՀ ԱԳ նախարար Ալի Աքբար Սալեհիի հետ:

Օգոստոսի 31-ին, Թեհրանում ընթացող Չմիացած Շարժման գազաթաժողովին մասնակցելու նպատակով Իրան այցելած նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել է ԻԻՀ Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, ԻԻՀ Մեջլիսի խոսնակ Ալի Լարիջանիի եւ ԻԻՀ ԱԳ նախարար Ալի Աքբար Սալեհիի հետ:

Հայաստանի եւ Իրանի արտգործնախարարները բազմաթիվ հանդիպումներ են ունեցել բազմակողմ համաժողովների շրջանակներում:

2012թ. հոկտեմբերի 23-25-ը Երեւանում կայացել է հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստը:

2012թ. նոյեմբերի 8-ին, Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ տեղի է ունեցել Մեդրիի ՀԷԿ-ի շինարարական աշխատանքների հիմնարկեքի պաշտոնական արարողությունը:

Տարվա ընթացքում տեղի են ունեցել ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի, բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի, արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի, Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի այցերը Թեհրան, Հայաստան են այցելել Իրանի Էներգետիկայի նախարար, միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Մաջիդ Նամջուն, ներքին գործերի նախարար Մոսթաֆա Մոհամմադ Նաջջարը, ԻԻՀ փոխնախագահ, բնապահպանության կազմակերպության նախագահ Մոհամմադ Ջավադ Մոհամմադիզադեն:

Տեղի են ունեցել նաեւ քաղաքական, իրավական, մշակութային եւ այլ ոլորտներում համագործակցությանը նվիրված մի շարք միջգերատեսչական փոխայցելություններ եւ հանդիպումներ:

ԹՈՒՐՔԻԱ

2012թ. Թուրքիայի ոչ կառուցողական դիրքորոշման պատճառով Հայաստան-Թուրքիա հարաբերություններում որեւէ զարգացում տեղի չի ունեցել:

Տարվա ընթացքում միջազգային հանրությունը տարբեր առիթներով վերահաստատել է հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորմանը Հայաստանի սկզբունքային դիրքորոշմանն իր աջակցությունը:

ԱՊՀ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը 2012թ. մայիսի 15-ին Մոսկվայում եւ դեկտեմբերի 5-ին Աշխաբադում մասնակցել է ԱՊՀ ղեկավարների հանդիպումներին:

Մայիսի 30-ին Աշխաբադում եւ սեպտեմբերի 28-ին Յալթայում Վարչապետ Տիգրան Սարգսյանը մասնակցել է ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին: Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի մասնակցությամբ տեղի են ունեցել Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի ապրիլի 6-ին Աստանայում եւ դեկտեմբերի 4-ին Աշխաբադում նիստերը:

Տարվա ընթացքում նախապատրաստվել եւ ՀՀ կողմից ստորագրվել են տնտեսական, հումանիտար, սոցիալական, քաղաքական, արտակարգ իրավիճակների եւ այլ ոլորտների վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր:

Տնտեսական համագործակցության տեսանկյունից կարեւոր նշանակություն ունեցավ ԱՊՀ անդամ երկրների կողմից ազատ առեւտրի գոտու ստեղծման մասին պայմանագրի ստորագրումը: Հայաստանը առաջիններից մեկը ավարտեց այդ պայմանագրի վավերացման գործընթացը:

«Համագործակցության մշակութային մայրաքաղաքներ» միջպետական ծրագրի իրագործման շրջանակներում 2013թ. Գյումրին հայտարարվել է Համագործակցության մշակութային մայրաքաղաք:

ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ

Հետետողական քայլեր են ձեռնարկվել Հայաստանի եւ **Ուկրաինայի** միջեւ հարաբերությունների զարգացման նպատակով:

2012թ. հուլիսի 1-ին աշխատանքային այցով Ուկրաինայում գնտվող ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Ուկրաինայի Նախագահ Վիկտոր Յանուկովիչի հետ:

ՀՀ եւ Ուկրաինայի ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանն ու Կոնստանտին Գրիշչենկոն հանդիպումներ են ունեցել բազմակողմ համաժողովների շրջանակներում:

2012թ. մարտին Հայաստանում անցկացվեցին Ուկրաինայի մշակութային օրեր:

Օդեսայում բացվել է ՀՀ գլխավոր հյուպատոսությունը:

Ընթացիկ տարում քայլեր են ձեռնարկվել **Բելառուսի** հետ հարաբերությունների հետագա խորացման ուղղությամբ:

2012թ. ապրիլի 16-17-ը կայացավ Բելառուսի ԱԳ նախարար Սերգեյ Մարտինովի պաշտոնական այցը Հայաստան, որտեղ նրան ընդունել են Նախագահ Սերժ Սարգսյանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը, բանակցություններ են կայացել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Հայաստանի եւ Բելառուսի ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանը եւ Վլադիմիր Մակեյը հանդիպել են 2012թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանի շրջանակներում:

Հունվարի 11-13-ը տեղի ունեցավ ԱԱԽ քարտուղար Ա. Բաղդասարյանի այցը Բելառուս:

Հաշվետու տարվա ընթացքում տեղի է ունեցել հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը եւ խորհրդատվություններ ԱԳՆ-երի միջեւ:

2012թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը կայացավ **Մոլդովայի** վարչապետ Վլադ Ֆիլատի աշխատանքային այցը Հայաստան: Մոլդովայի վարչապետը հանդիպումներ ունեցավ Նախագահ Սերժ Սարգսյանի եւ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ: Դեկտեմբերի 1-ին Երեւանում կայացավ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ Մոլդովայի փոխվարչապետ, ԱԳ եւ եվրոպական ինտեգրման նախարար Յուրի Լյանկեի հանդիպումը:

2012թ. նոյեմբերի 29-30-ը տեղի ունեցավ **Թուրքմենստանի** Նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի պաշտոնական այցը Հայաստան: ՀՀ եւ Թուրքմենստանի Նախագահները ստորագրեցին համատեղ կոմյունիկե, որով վերահաստատեցին հավատարմությունը երկու երկրների դարավոր եւ բարիդրացիական հարաբերություններին, հանդես եկան երկկողմ կառուցողական համագործակցությունն ընդլայնելու եւ խորացնելու օգտին: Ստորագրվեց նաեւ 6 փաստաթուղթ՝ օդային հաղորդակցության, գիտատեխնիկական համագործակցության, գյուղատնտեսության, սեյսմիկ պաշտպանության, անասնաբուժության ոլորտներում համագործակցության, Հայաստանի Հանրապետությունում Թուրքմենստանի դեսպանությունը եւ Թուրքմենստանում ՀՀ դեսպանությունը տեղակայելու համար հողատարածքների փոխադարձ տրամադրման մասին համաձայնագրեր: Այցի շրջանակներում Երեւանում տեղի ունեցավ Հայաստանի եւ Թուրքմենստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին նվիրված համերգ:

Սեպտեմբերի 5-7-ը Երեւանում կայացավ ՀՀ եւ Թուրքմենստանի միջկառավարական տնտեսական հանձնաժողովի 4-րդ նիստը:

Հունիսի 5-6-ը պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Ղազախստանի պաշտպանության նախարար Ադիլբեկ Ջակսիբեկովը: Այցի ընթացքում ստորագրվել է ռազմատեխնիկական համագործակցության մասին համաձայնագիր:

Հունիսի 6-8-ը Աստանայում կայացել է միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

2012թ հուլիսի 7-8-ը Աստանայում կայացել է Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ առեւտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի չորրորդ նիստը:

ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՖՐԻԿԱ

2012 թվականը բեկումնային էր Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի մի շարք երկրների հետ համագործակցության խորացման, նոր գործընկերային հարաբերություններ հաստատելու տեսանկյունից:

ՀՀ համագործակցությունը տարածաշրջանի հիմնական գործընկեր երկրների՝ Չինաստանի, Ճապոնիայի եւ Հնդկաստանի հետ կարելու տեղ է զբաղեցրել այս ուղղությամբ իրականացվող քաղաքական օրակարգում:

Տարվա ընթացքում կայացել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պետական այցը Սինգապուր եւ պաշտոնական այցերը Ճապոնիա եւ Վիետնամ: ՀՀ Նախագահի գլխավորած պատվիրակությունը մարտին Սեուլում մասնակցել է Միջուկային անվտանգության գագաթաժողովին:

Կարելու որոշումներ են ընդունվել տարածաշրջանում ՀՀ դիվանագիտական ներկայությունն ընդլայնելու եւ այդ աշխարհամասի երկրների հետ առավել ակտիվ հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ:

Ճապոնիա կատարած այցի ընթացքում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է Ճապոնիայի կայսր Ակիհիտոյի, վարչապետ Յոշիհիկո Նոդայի, խորհրդարանի ներկայացուցիչների պալատի խոսնակ Տակահիրո Յոկոմիչիի հետ: Նախագահն ու Ճապոնիայի վարչապետը ստորագրել են Համատեղ հայտարարություն Հայաստանի Հանրապետության եւ Ճապոնիայի միջեւ բարեկամության եւ համագործակցության հետագա խորացման մասին:

Նախագահի գլխավորած պատվիրակության կազմում գտնվող ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել Ճապոնիայի ԱԳ նախարար Կոիչիրո Գեմբայի հետ: Արտգործնախարարները ստորագրել են Հուլիսի ՀՀ ԱԳՆ եւ Ճապոնիայի ԱԳՆ միջեւ համագործակցության վերաբերյալ: Վիետնամ կատարած այցի ընթացքում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է ՎՍՀ Նախագահ Չիոնգ Տան Շանգի, վարչապետ Նգույեն Տան Զունգի, Կոմունիստական կուսակցության Գլխավոր քարտուղար Նգույեն Ֆու Չոնգի եւ Ազգային Ժողովի նախագահ Նգույեն Շին Հունգի հետ: Հայաստանի եւ Վիետնամի նախագահները պայմանավորվել են գործուն քայլեր ձեռնարկել երկու երկրների միջեւ ապագային ուղղված համակողմանի հարաբերությունների ծավալման համար: Այցի ընթացքում ստորագրվել է երկու երկրների միջեւ տնտեսական, առևտրական, գիտական եւ տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիր:

Նախագահ Սերժ Սարգսյանը պետական այցելություն է կատարել **Սինգապուր**, ուր հանդիպել է Նախագահ Թոնի Տան Քեն Յամի, վարչապետ Լի Սյան Լուի հետ: Այցի արդյունքում կարելու պայմանավորվածություններ են ձեռք բերվել երկկողմ համագործակցությունը խթանելու ուղղությամբ:

Հոկտեմբերի 22-26-ը Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը Չինաստան այցի ընթացքում հանդիպումներ է ունեցել ՉԺՀ

պետխորհրդի անդամ, հասարակական անվտանգության նախարար Մեն Զիանջուի եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Շարունակվել է ԶԺՀ-ի կողմից մեր երկրին անհատույց տեխնիկական օգնության ծրագրերի իրականացումը: 2012թ. այդ շրջանակներում Չինաստանը Հայաստանին է տրամադրել 249 քաղաքային ավտոբուսներ:

2012-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այցեր է կատարել Վիետնամ, Կորեայի Հանրապետություն, Սինգապուր, Ինդոնեզիա, Ֆիլիպիններ, Ավստրալիա եւ Նոր Զելանդիա, ուր հանդիպումներ է ունեցել նշված երկրների բարձրագույն ղեկավարության հետ եւ պայմանավորվածություններ ձեռք բերել հարաբերությունների ակտիվացման եւ միջազգային կազմակերպություններում միմյանց աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ, ստորագրվել են երկկողմ հարաբերությունների իրավական հիմքերն ընդարձակող մի շարք համաձայնագրեր:

Քայլեր են ձեռնարկվել աֆրիկյան երկրների հետ հարաբերությունները խթանելու ուղղությամբ:

ՀՀ ԱԳ նախարարը տարբեր բազմակողմ համաժողովների շրջանակներում՝ Չմիացած երկրների շարժման, «Ռիո+20»-ի, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Թեհրանում, Ռիո դե Ժանեյրոյում, Կինշասայում կայացած գագաթաժողովների, Չմիացած երկրների շարժման Շարմ էլ Շեյխում կայացած ԱԳ նախարարների համաժողովի ընթացքում երկկողմ հանդիպումներ է ունեցել Կոնգոյի Հանրապետության նախագահի, Կամերունի, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության, Սենեգալի, Կոտ դ'Իվուարի, Բուրկինա Ֆասոյի, Ինդոնեզիայի, Մյանմարի, Նոր Զելանդիայի, Շրի Լանկայի, Բուրանդի իր գործընկերների հետ:

Դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Մալավիի, Բուրանդի եւ Տուվալույի հետ:

Որոշում է կայացվել ՀՀ դեսպանություններ հիմնել Ինդոնեզիայում եւ Վիետնամում:

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Չնայած արաբական մի շարք երկրներում շարունակվող զարգացումներին եւ ներքին անկայունությանը՝ տարվա ընթացքում քայլեր են ձեռնարկվել արաբական աշխարհի հետ ավանդական բարեկամական հարաբերությունների պահպանման եւ զարգացման ուղղությամբ:

Նոյեմբերի 26-28-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը **Լիբանան**, որի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Լիբանանի Նախագահ Միշել Սլեյմանի, ԱԺ նախագահ Նաբիի Բըրրիի եւ վարչապետ Նաջիբ Միքատիի հետ: Այցելության ընթացքում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր:

Մայիսին Շարմ էլ Շեյխում եւ սեպտեմբերին Նյու-Յորքում ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում կայացել են ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ Լիբանանի արտգործնախարար Ադնան Մանսուրի հանդիպումները:

Նկատի ունենալով Սիրիայում ծավալվող իրադարձությունները, շարունակվող բախումները եւ խորացող հումանիտար ճգնաժամը՝ Հայաստանը տարբեր ուղղություններով եւ մակարդակներով քայլեր է ձեռնարկել սիրիահայության անվտանգության, հայ համայնքի բնականոն կենսագործունեության ապահովման եւ պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ: Սեպտեմբերին Նյու-Յորքում ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում տեղի է ունեցել Հայաստանի եւ Սիրիայի արտգործնախարարների հանդիպումը:

Փետրվարի 4-ին Մյունխենում եւ մայիսի 9-ին Շարմ էլ Շեյխում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել **Եգիպտոսի** արտգործնախարար Մոհամեդ Քամլ Ամրի հետ:

Մայիսին տեղի է ունեցել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի այցը Եգիպտոս՝ Շարմ Էլ-Շեյխում Չմիացած երկրների շարժման անդամ պետությունների արտգործնախարարների հանդիպմանը մասնակցելու նպատակով: Այցի շրջանակներում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել Պաղեստինի արտգործնախարար Ռիյադ ալ-Մալիքի, Եմենի արտգործնախարար Աբուբաքր Աբդուլլահ Ալ-Քիբրիի, Թունիսի արտգործնախարար Ռաֆիկ Աբդեսալեմի, Իրաքի արտգործնախարար Հոշիար Ջեբարիի հետ:

2012թ. սեպտեմբերի 4-8-ը տեղի է ունեցել կառավարության 5 անդամների ուղեկցությամբ **Իրաքի** փոխվարչապետ Ռ.Ն. Շաուեյսի այցը Երեւան: Նոյեմբերի 6-8-ը կայացել է ՀՀ փոխվարչապետ Արմեն Գեորգյանի պաշտոնական այցը Իրաք: Գումարվել է հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ նիստը, որի շրջանակներում ստորագրվել է ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության վերաբերյալ համաձայնագիր:

Դեկտեմբերին Երեւանում վերաբացվեց Իրաքի դեսպանությունը:

Հունիսի 24-30-ը **Հորդանանում** կայացավ «ՀՀ կառավարության եւ Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջեւ մշակութային համագործակցության մասին համաձայնագրի ստորագրումը, որին զուգահեռ անցկացվեցին Հայաստանի մշակույթի օրեր: Սեպտեմբերին ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում տեղի է ունեցել Հայաստանի եւ Հորդանանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Նասեր Ջուդեյի հանդիպումը: Ամանում քաղաքական խորհրդատվություններ են կայացել Հայաստանի եւ Հորդանանի արտգործնախարարությունների միջեւ:

Մայիսի 11-15-ը Հայաստանում էր գտնվում **Քուվեյթի** շեյխա, «Օրինակելի մայր» հիմնադրամի նախագահ Ֆարիհա ալ-Ահմադ ալ-Սաբահի գլխավորած պատվիրակությունը:

Նոյեմբերի 19-ին տեղի է ունեցել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Քուվեյթի Պետություն, որի շրջանակներում նախարար Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել Քուվեյթի Էմիր Շեյխ Սաբահ Ալ Ահմեդ Ալ Ջաբեր Ալ Սաբահի, վարչապետ Շեյխ Ջաբեր Ալ Մուբարաք Ալ Ահմադ Ալ Սաբահի, փոխվարչապետ, արտգործնախարար Շեյխ Սաբահ Խալեդ Ալ Համադ Ալ Սաբահի, եւֆինանսների նախարար, հայ-քուվեյթյան միջկառավարական հանձնաժողովի քուվեյթյան կողմի նախագահ Նահիֆ Ֆալահ Ալ Հաջրաֆի հետ: Հայաստանի եւ Քուվեյթի

արտգործնախարարները ստորագրել են դիվանագիտական անձնագիր կրողների համար մուտքի արտոնագրային ռեժիմը վերացնելու մասին համաձայնագիրը:

Նոյեմբերի 5-6-ը կայացավ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գետրոգյանի աշխատանքային այցը **Արաբական Միացյալ Էմիրություններ**: Հանդիպումներ տեղի ունեցան արտաքին առևտրի, ջրային ռեսուրսների եւ շրջակա միջավայրի նախարարների հետ:

Նոյեմբերի 20-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը այցելել է **ԱՄԷ**, ուր հանդիպումներ է ունեցել Ազգային խորհրդի նախագահ Մուհամադ Ահմադ Մուրիհի, ԱՄԷ արտգործնախարար շեյխ Աբդալլահ բին Ջայեդ Ալ Նահայանի եւ արտաքին առևտրի նախարար շեյխա Լուբնա ալ-Քասիմիի հետ: Այցի շրջանակներում երկու երկրների ԱԳ նախարարները ստորագրել են Օդային հաղորդակցության մասին միջկառավարական համաձայնագիրը:

Մայիսի 19-22-ը Երեւանում անցկացվեցին խորհրդատվություններ Հայաստանի եւ **Օմանի** ԱԳՆ-երի միջեւ:

Ապրիլի 22-24-ը Հայաստան է այցելել **Իսրայելի** գյուղատնտեսության նախարար Օրիտ Նոկեդի գլխավորած պատվիրակությունը: Օգոստոսի 23-26-ը տեղի է ունեցել Իսրայելի սիյուռքի եւ տեղեկատվության նախարարի այցը Հայաստան:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Շարունակեցին ակտիվանալ լատինամերիկյան երկրների հետ Հայաստանի հարաբերությունները, որին նպաստեցին տարբեր մակարդակների փոխայցելությունները:

Սեպտեմբերի 3-5-ը պաշտոնական այցով ՀՀ-ում էր գտնվում **Արգենտինայի** արտաքին հարաբերությունների եւ պաշտամունքի նախարար Հեկտոր Մարկոս Թիմերմանը, որին ընդունել է Նախագահ Սերժ Սարգսյանը, բանակցություններ են կայացել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

2012թ. ապրիլին Երեւան այցելեց Բուենոս Այրեսի կառավարության ղեկավար Մաուրիսիո Մակրին:

2012թ. հոկտեմբերին ստորագրվեց Հայաստանի եւ Արգենտինայի պետական եկամուտների գործակալությունների միջեւ մաքսային գործերում համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին համաձայնագիրը:

2012թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանն այցելեց **Մեքսիկա**, որի ընթացքում Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ ունեցավ Մեքսիկայի արտաքին հարաբերությունների քարտուղար Պատրիսիա Էսպինոսայի, ինչպես նաեւ օրենսդիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Այցելության ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց երկկողմ հարաբերությունները խթանելու վերաբերյալ, որոշում կայացվեց Մեխիկոյում հիմնել ՀՀ դեսպանություն:

Դեկտեմբերին փոխվարչապետ Արմեն Գեորգյանը մասնակցել է Մեքսիկայի նախագահի երդմնակալության արարողությանը:

Հոկտեմբերի 23-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն այցելեց **Գվատեմալա**, որտեղ այդ երկրի բարձրաստիճան ղեկավարության հետ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց իրավապայմանագրային դաշտի ձեւավորման, արտգործնախարարությունների միջեւ խորհրդատվությունների անցկացման, խորհրդարաններում բարեկամական խմբերի ձեւավորման, միջազգային կազմակերպություններում փոխգործակցության խթանման, գործարար կապերի հաստատման վերաբերյալ:

2012թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն այցելեց **Կոստա Ռիկա**, որտեղ հանդիպումներ ունեցավ խորհրդարանի ղեկավարի եւ ԱԳ նախարարի հետ: Բանակցությունների արդյունքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին հայ-կոստարիկյան հարաբերությունների զարգացման վերաբերյալ:

Տարին բեղմնավոր էր **Ուրուգվայի** հետ փոխգործակցության զարգացման առումով:

2012թ. մայիսի 4-ին կայացավ **Ուրուգվայի** արտաքին գործերի նախարար Լուիս Ալմագրո Լեմեսի պաշտոնական այցը Հայաստան, որին ընդունեց Նախագահ Սերժ Սարգսյանը, բանակցություններ կայացան ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Նոյեմբերի 12-18-ը Հայաստան եւ Արցախ պաշտոնական այց կատարեց Ուրուգվայի Ներկայացուցիչների պալատի նախագահ Խորխե Օռիկոյի գլխավորած պատվիրակությունը, որն այդ մակարդակի օտարերկրյա առաջին բարձրաստիճան պաշտոնյան էր, որն այցելեց Արցախ:

Մայիսին Շարմ էլ Շեյխում եւ սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 67-րդ նստաշրջանի շրջանակներում Նյու Յորքում կայացան արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները **Կուբայի** արտգործնախարար Բրունո Ռոդրիգես Պառիլյայի հետ:

Ապրիլի 3-ին Հայաստանի Հանրապետության եւ **Գրենադայի** միջեւ հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2012 թվականը նշանավորվեց ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցության 20-ամյակի տարեդարձով, որի ներքո տեղի ունեցան մի շարք հոբելյանական միջոցառումներ թե՛ Հայաստանում, թե՛ Նյու Յորքում:

Սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 1-ը ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի ԳԱ 67-րդ նստաշրջանին, որտեղ հանդես է եկել ելույթով եւ հանդիպել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին:

2012 թվականի հունիսի 20-ին Ռիո դե Ժանեյրոյում ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Կայուն զարգացման «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովին, որին ելույթով հանդես եկավ ԱԳ նախարարը, Հայաստանը ներկայացրեց Ազգային գնահատման զեկույց: Գագաթաժողովի շրջանակներում Հայաստանի նախաձեռնությամբ քննարկումներ անցկացվեցին կայուն զարգացման չափորոշիչների նոր մեթոդաբանության վերաբերյալ:

Նոյեմբերին Հայաստանն ընտրվել է ՄԱԿ-ի Միջազգային առեստրի իրավունքի հանձնաժողովի (2013-2019 թթ.) անդամ, նույն ամսին ՄԱԿ-ի ԳԱ-ն հաստատեց ՄԱԿ-ի Բաց տիեզերքի խաղաղ նպատակներով օգտագործման կոմիտեին Հայաստանի անդամակցությունը:

ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում մարդու իրավունքների բնագավառում ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքի վերաբերյալ պատրաստվել եւ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ազգային միջանկյալ զեկույցը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2012 թ հրեյանների ցանկում ներառվեցին Հայ տպագիր գրքի 500-ամյակը, Մեսրոպ Մաշտոցի 1650-ամյակը, Անանիա Շիրակացու 1400-ամյակը եւ Սայաթ Նովայի 300-ամյակը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ նյութական մշակութային ժառանգության 2012թ. ներկայացուցչական ցանկում ներառվեցին «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ» էպոսի կատարողական դրսեւորումները:

Ապրիլի 23-ին «Երեւանը 2012թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք» տարվա բացման պաշտոնական արարողությանը մասնակցելու նպատակով Երեւան այցելեց **ՅՈՒՆԵՍԿՕ-ի** պատվիրակությունը՝ գլխավոր տնօրենի տեղակալ Գետաչեւ Ընգիդայի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 36-րդ Գլխավոր կոնֆերանսի նախագահի գլխավորությամբ:

Հոկտեմբերի 18-19-ը Երեւանում տեղի ունեցավ **ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության** «Համամարդկային արժեքները եւ մշակութային բազմազանությունը 21-րդ դարում. Զբոսաշրջության ներդրումը» խորագրով միջազգային համաժողովը, որի արդյունքում ընդունվեց «Երեւանյան հռչակագիրը»:

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 6-7-ը Դուբլինում կայացավ ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի 19-րդ նստաշրջանը, որին մասնակցեց Հայաստանի պատվիրակությունը՝ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ: Հայաստանի պատվիրակությունն ակտիվ մասնակցություն է ունեցել խորհրդի օրակարգում ներառված լավ կառավարման, «Հելսինկի +40» գործընթացի, ինչպես նաեւ ռասիզմի եւ այլատյացությանը վերաբերող հարցերի քննարկումներին: Նստաշրջանի առաջին օրն ընդունվել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների հայտարարությունը:

Հայկական կողմն ակտիվ մասնակցություն է ունեցել ԵԱՀԿ Անվտանգության համագործակցության ֆորումի (ԱՀՖ) շրջանակներում Վիեննա 2011թ. փաստաթղթի հետագա արդիականացման բանակցային գործընթացին:

Հունիսի 11-12-ը Հայաստանում էր գտնվում ԵԱՀԿ գործող նախագահ, Իռլանդիայի փոխվարչապետ, ԱԳ եւ առևտրի նախարար Էյմոն Գիլմորի գլխավորած պատվիրակությունը, որին ընդունել են Հանրապետության Նախագահը, ԱԺ նախագահը բանակցություններ են կայացել ԱԳ նախարարի հետ:

Դեկտեմբերին Դուբլինում կայացել է ԱԳ նախարարի հանդիպումը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահի հետ:

Հուլիսի 12-ին Նախագահ Սերժ Սարգսյանը, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը ու արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել են Երեւան ժամանած ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերին: ԱԳ նախարարն ու ԵԱՀԿ գլխավոր քարտուղարը հանդիպել են նաեւ սեպտեմբերին Նյու-Յորքում եւ դեկտեմբերին Դուբլինում:

Սեպտեմբերի 7-ին Հանրապետության Նախագահը, ԱԺ նախագահը, վարչապետը ու ԱԳ նախարարը ընդունել են Երեւան ժամանած ԵԱՀԿ-ում շուրջ երկու տասնյակ անդամ երկրների հավատարմագրված դեսպաններին:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստանն ակտիվ մասնակցություն է ունեցել կազմակերպության աշխատանքներին:

Հայաստանի ներկայացուցիչն ընտրվել է Մարդկանց Թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի մոնիտորինգն իրականացնող փորձագիտական խմբի անդամ (2013-2017 թթ.) եւ ԵԽ գենդերային հավասարության հարցերով հանձնաժողովի անդամ (2012-2014 թթ.):

ԵԽ Նախարարների կոմիտեն հաստատեց Հայաստան-Եվրոպայի Խորհուրդ 2012-2014թթ. Գործողությունների ծրագիրը, որը ներկայացվեց հուլիսին Երեւանում Հայաստանի ԱԳ նախարարի եւ ԵԽ գլխավոր քարտուղարի տեղակալի կողմից այդ նպատակով կազմակերպված համաժողովին:

Սեպտեմբերին Նյու-Յորքում տեղի է ունեցել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ԵԽ գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի հանդիպումը:

Սեպտեմբերի 20-21-ը Եվրախորհրդի անդամ երկրների խորհրդարանների նախագահների համաժողովին մասնակցելու նպատակով Ստրասբուրգ է այցելել ՀՀ Ազգային ժողովի նախագահը:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2012թ. հոկտեմբերին Կինշասայում կայացած Ֆրանկոֆոնիայի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթաժողովին Հայաստանը միաձայն կերպով դարձել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) լիիրավ անդամ: Գագաթաժողովին մասնակցեց ՀՀ պատվիրակությունը՝ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ, ով լիազույժար նիստին հանդես եկավ ելույթով:

Կազմակերպության 14-րդ գագաթաժողովի եզրափակիչ բանաձեռում ՖՄԿ անդամ պետությունները լիակատար աջակցություն հայտնեցին դարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերին: ՖՄԿ-ն կոչ արեց շարունակել բանակցությունները Մինսկի խմբի համանախագահների միասնական և անբաժան հենք հանդիսացող առաջարկությունների՝ մասնավորապես ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի սկզբունքների հիման վրա:

Կինշասայի գագաթաժողովի շրջանակներում՝ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը և ՖՄԿ գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆը հոկտեմբերի 12-ին ստորագրեցին Հայաստանի և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության միջև ֆրանսերեն լեզվի ուսուցման խորացման վերաբերյալ համաձայնագիրը:

ՍԵԿՏՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2012թ. ընթացքում Հայաստանը շարունակում էր ակտիվորեն մասնակցել ՄԾՏՀԿ-ի գործունեությանը, ԱԳ նախարարների, Ավագ պաշտոնյաների կոմիտեի, Սեյծովյան առևտրի և զարգացման բանկի, Սեյծովյան ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի աշխատանքներին՝ ուղղված անդամ երկրների միջև տրանսպորտի, բնապահպանության, գյուղատնտեսության, էներգետիկայի, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների, փոքր և միջին ձեռնարկությունների բնագավառներում համագործակցությանը:

Հունիսին Ստամբուլում կայացավ ՄԾՏՀԿ 20-ամյակին նվիրված գագաթաժողովը, որին Հայաստանը մասնակցեց փոխարտգործնախարար Աշոտ Հովակիմյանի մակարդակով:

Հոկտեմբերի 4-ին Երեւանում կայացավ ՄԾՏՀ Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների աշխատանքային խմբի նիստը, որի աշխատանքները նախագահում է Հայաստանը:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԿ

Հայաստանի անվտանգության կարելուր բաղադրիչ հանդիսացող ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության ամրապնդումը եղել է ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը:

Տարին նշանավորվում էր Հավաքական անվտանգության պայմանագրի կնքման 20-ամյակով եւ Կազմակերպության ստեղծման 10-ամյակով:

Մայիսին ՀՀ Նախագահի մասնակցությամբ Մոսկվայում կայացած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի (ՀԱԽ) հորբյանական նստաշրջանի ընթացքում ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները հանդես եկան ծավալուն Հռչակագրով, ուր անդրադարձան նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին՝ նշելով դրա բացառապես խաղաղ միջոցներով կարգավորման անհրաժեշտությունը՝ ուժի եւ ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի եւ տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա:

Հայաստանի Նախագահը մասնակցեց դեկտեմբերի 19-ին Մոսկվայում կայացած Հավաքական անվտանգության խորհրդի հերթական նիստին, որի ընթացքում ընդունվեցին մի շարք փաստաթղթեր՝ նվիրված ռազմական ոլորտում, արտակարգ իրավիճակների եւ տեղեկատվական անվտանգության ասպարեզներում առկա համագործակցության սերտացմանը, ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման եւ խաղաղապահ ուժերի ամրապնդմանը:

Սեպտեմբերի 15-19-ը Հայաստանում անցկացվեցին Փոխգործակցություն 2012 համատեղ զորավարությունները՝ ՀԱՊԿ Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի կիրառմամբ:

Հայաստանն իր մասնակցությունը բերեց հոկտեմբերին Ղազախստանում «Անսասան եղբայրություն 2012» խորագրով ՀԱՊԿ խաղաղապահ զորավարություններին:

Տարվա ընթացքում ՀԱՊԿ շրջանակներում կարելուր տեղ է հատկացվել անդամ երկրների արտաքին քաղաքական դիրքոշումների համադրմանը:

2012թ. ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժան երեք անգամ այցելել է Հայաստան, հանդիպումներ ունեցել երկրի բարձրագույն ղեկավարների հետ:

ՆԱՏՕ

2012թ. ընթացքում իրականացված աշխատանքները նպատակաուղղված են եղել Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների (ԱԳԳԾ) 2011-2013թթ. ծրագրի իրականացմանը, համագործակցությանը արտակարգ իրավիճակների կառավարման, խաղաղապահության, հանրային դիվանագիտության եւ պաշտպանական քաղաքականության բնագավառներում:

Մարտի 6-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց եւ ելույթ ունեցավ «Հյուսիսատլանտյան խորհուրդ+Հայաստան» ձեռագրով հանդիպմանը:

Սեպտեմբերի 6-ին Հայաստան այցելեց ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը, որին ընդունեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Ապրիլի 19-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Բրյուսելում մասնակցեց Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի արտագործնախարարների մակարդակով Հյուսիսատլանտյան Խորհրդի հանդիպմանը:

Մայիսի 21-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցեց Չիկագոյում ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակներում կայացած Աֆղանստանում անվտանգության աջակցության ուժերին մասնակցող երկրների ղեկավարների հանդիպմանը:

Նոյեմբերի 1-8-ը Հայաստանում անցկացվեց «ՆԱՏՕ-ի շաբաթ»-ը:

ԽԱՂԱՂԱՊԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2012թ. Հայաստանը վերսկսեց մասնակցությունը Կոսովոյում իրականացվող բազմազգ խաղաղապահ առաքելությանը:

126 հայ խաղաղապահները շարունակել են Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի մասնակցությունը:

Դեկտեմբերի 25-29-ը ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունը այցելել է Աֆղանստան:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱԳՆ-ը շարունակել է հետետղական կերպով բարձրացնել Ադրբեջանի կողմից սպառազինությունների կուտակման եւ ԵՍՁՈՒ պայմանագրով սահմանափակվող սովորական սպառազինությունների առաստաղների շարունակական գերազանցման խնդիրը տարբեր միջազգային ատյաններում:

Հայաստանը շարունակել է իրականացնել 1990թ. ԵՍՁՈՒ պայմանագրի, Վիեննա 2011թ. փաստաթղթի եւ ԵԱՀԿ վստահության ու անվտանգության ամրապնդման միջոցառումների շրջանակներում ստանձնած իր միջազգային պարտավորությունները:

ԳԼՈՒԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2012թ. մարտին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը Սեուլում մասնակցեց եւ ելույթ ունեցավ միջուկային անվտանգության համաշխարհային գագաթաժողովին:

2012թ. ապրիլին Հայաստան այցելեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Յուկիյա Ամամոն, որին ընդունեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, Յուկիյա Ամամոն հանդիպումներ ունեցավ ՀՀ բարձրաստիճանի պաշտոնյաների հետ:

Առաջընթաց է արձանագրվել միջուկային անվտանգության եւ երկակի ու ռազմական նշանակության ապրանքների արտահանման վերահսկման ոլորտում ՀՀ-ՌԴ, ՀՀ-ԱՄՆ եւ ՀՀ-ԵՄ համագործակցության խորացման ուղղությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական բաղադրիչը կարելի է գբաղեցրել արտաքին քաղաքական օրակարգում: Շարունակվել են աշխատանքները գործընկեր պետությունների հետ տնտեսական հարաբերությունների զարգացման ուղղությամբ ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցների եւ ֆինանսական հաստատությունների շրջանակներում: ԱԳՆ համակարգմամբ տեղի են ունեցել մի շարք միջկառավարական հանձնաժողովների նիստեր, գործարար համաժողովներ: Ստորագրվել են տնտեսական համագործակցությունը խթանող տասնյակ փաստաթղթեր:

Դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից հետետողական աշխատանք է տարվել Հայաստանում ներդրումային հնարավորությունները ներկայացնելու եւ Հայաստան գործարարների այցեր կազմակերպելու ուղղությամբ:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱԳՆ-ը, դիվանագիտական ներկայացուցչությունները նպաստել են խորհրդարանական դիվանագիտության ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ բարեկամական խմբերի փոխայցելություններին, միջխորհրդարանական հանձնաժողովների նիստերի անցկացմանը, միջխորհրդարանական կապերի ամրապնդմանն ու ընդայնմանը:

ԱԳՆ-ը համակարգել է Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը:

Արտգործնախարարությունը շարունակել է համակողմանի աջակցությունը Սփյուռքի նախարարության ծրագրերի եւ նախաձեռնությունների իրականացմանը, Հայաստան – Սփյուռք կապերի ամրապնդմանը:

Արտերկում հայկական մշակույթի ներկայացման նպատակով աջակցություն է ցուցաբերվել Մշակույթի նախարարության գործունեությանը, դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից եւ աջակցությամբ կազմակերպվել են տասնյակ մշակութային միջոցառումներ՝ փառատոներ, մշակութային օրեր, ցուցահանդեսներ եւ համերգներ: Կազմակերպվել են Հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջոցառումներ:

Հատուկ կարելիություն է տրվել ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանը, Հայաստանի մարզերի եւ քաղաքների եւ տարբեր երկրների վարչատարածքային միավորների հետ հարաբերությունների զարգացմանը:

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

Ստորագրվել է 82 միջազգային պայմանագիր եւ 23 միջազգային պայմանագիր չհանդիսացող փաստաթուղթ, վավերացվել եւ հաստատվել է 84 եւ ուժի մեջ է մտել 52 միջկառավարական եւ միջպետական փաստաթուղթ:

2012թ. ՀՀ-ն դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ արձանագրություններ է ստորագրել 4 պետության՝ Տուվալուի, Գրենադայի, Մալավիի եւ Բուրանի հետ:

ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ մշակվել եւ ընդունվել են շուրջ 50 իրավական ակտեր:

ԱԳՆ համակարգում շրջանառվել է ավելի քան 142.000 փաստաթուղթ:

ԱԳՆ կատարել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված նախարարությանը վերաբերող բոլոր ծրագրերը, կառավարության բոլոր 364 հանձնարարականները:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2012թ. ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության եւ հյուպատոսական ներկայացուցչությունների կողմից սպասարկվել է շուրջ 127.000 քաղաքացի:

Տարվա ընթացքում ընդունվել են հյուպատոսական ոլորտին առնչվող մի շարք իրավական ակտեր եւ փոփոխություններ են կատարվել գործող իրավական ակտերում, որով կանոնակարգվել եւ ավելի դյուրացվել են քաղաքացիներին մատուցվող հյուպատոսական ծառայությունները:

2012թ. պարզեցվել է ՀՀ քաղաքացիություն ստանալու ընթացակարգը Սիրիայի եւ Լիբանանի քաղաքացիների համար:

Գործարկվել է «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգը, որի միջոցով իրականացվում են մի շարք հյուպատոսական գործառույթներ: Ներկայումս այդ համակարգով աշխատում են 12 դիվանագիտական ներկայացուցչություններ: Նախատեսվում է աստիճանաբար համակարգին միացնել արտերկրում գործող բոլոր հյուպատոսությունները:

ԱԳՆ-ն եւ դիվանագիտական ներկայացուցչությունները աջակցություն են ցուցաբերել ճգնաժամային եւ արտակարգ իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին հայրենիք վերադառնալու հարցում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Հանրապետության Նախագահը, վարչապետն ու ԱԳ նախարարը շուրջ յոթ տասնյակ հարցազրույցներ եւ մամուլի ասուլիսներ են ունեցել աշխարհի առաջատար լրատվամիջոցներին:

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալները, դեսպաններն ու գլխավոր հյուպատոսները ելույթներ եւ հարցազրույցներ են ունեցել մի շարք հետազոտական կենտրոններում, համաժողովներում, հարցազրույցներ տվել հեղինակավոր լրատվամիջոցներին:

2012թ. ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարը ելույթներով հանդես է եկել Լոս-Անջելեսի Համաշխարհային հիմնախնդիրների խորհրդում, Ավստրալիայի Միջազգային հարաբերությունների ինստիտուտում, Մեքսիկայի Դիվանագիտական ուսումնասիրությունների Մատիաս Ռոմերոյի անվան ինստիտուտում, Կորեայի Արտաքին հարաբերությունների եւ ազգային անվտանգության ինստիտուտում, Հանոյի դիվանագիտական ակադեմիայում:

2012թ. ընթացքում հիմնականում ավարտին է հասցվել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միասնական համակարգով գործող կայքերի մշակումը:

Առաջատար արտասահմանյան լրատվամիջոցները բազմաթիվ հոդվածներ եւ հաղորդումներ են ներկայացրել Հայաստանի վերաբերյալ: Կազմակերպվել են արտասահմանյան լրագրողական խմբերի այցելություններ Հայաստան եւ Արցախ: